

ՃԱՆԱՊԱՐԶՈՐԳՈՒԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹՒԻՒՆՔ.

(Շարահանկա-խի-ն)

ԽԳ.

Խոստակերաց կամ Բարկափայ լանքը. Նորա արշանագրա-խի-նը, պատ-
 ճա-խի-նը, վերանորոգա-խի-նը, նա-ախափքը, ճշտապաշտոն լինելը.
 Այլ է Խոստակերաց լանքը և այլ է Ահեբճանի լանքը: Խաչիկ կրօնա-որի
 արշանը: Առնելոյը կամ Առաստափաճա-խի-ղի փեղը: Սա-րք Յահաննէտի
 աղբի-րը: Հրաչիաքերդը. Նորա անցեալը: Աճադա- գի-ղը:

Քարկափի գիրքը բարձրագիր սարահարթ է, հիւսիս և արևել-
 եան կողմից լեռնագօտիով ծածկուած, իսկ հարաւ և արևմը-
 տեան կողմից բաց, որ նայում է Շարուրայ դաշտի վերայ: Հա-
 յերը կոչում են Քարկափ, իսկ թուրքերը Քալադաշ: Վանքի
 շինութիւններն են գաւիթ, դանգակատուն և եկեղեցի: Գաւի-
 թը զանգակատան հարաւային պատին կից է, ընդարձակ և
 այժմ բոլորովին խոնարհուած, կանգուն մնացել են միայն
 հիմնապատերը: Սորա միակ հիւսիսային դռնով, շեմի գլխին
 դրած մեծ քարի տակով, մինչ մտնում ենք փոքր զանգակա-
 տունը, տասը ֆայլ երկարութեամբ և եօթը քայլ լայնու-
 թեամբ: Սա եղել է կամարակապ, այժմ խոնարհուած: Կամա-
 րած և առաստաղի արևմտեան մասը մինչև վաթսուներկան
 թուականներն հղել է կանգուն և պատուարել է իւր տակ Սա-
 չիկու զբօսասէր կանանց: Ձանգակատան արևմտեան պատին
 կից եղած է մի փոքրիկ կամարակապ և այժմ քանդուած սե-
 նեակ:

Սկեղեցու միակ արևմտեան դուռը բացում է այդ զանգա-
 կատան մէջ: Մտնելով ներս՝ մենք նկատում ենք որ նա կանգ-
 նած է չորս սրմնավակ սիւների վերայ, լայն, բարձր և կամա-
 րածածկ: Լոյսը և վայրենի աղաւնիները թափանցում են ոչ
 միայն չորս բարձրագիր լուսամուտներով, այլ և պատերի լայն
 ճեղքուածներից: Քանդուած են սեղանի արևելեան լուսա-
 մուտը, արևելեան և հարաւային կամարները և արևմտեան

կամարի մի մասը: Գմբեթը շատ վաղուց խոնարհուած է և նորա կրսչաղախ բեկորները ցրուած են եկեղեցու ներսը:

Ջորս խորաններից երկուսը զետեղուած են աւագ դասում՝ և երկուսը յետին դասում: Առաջինների մէջ, առաստաղի տակ, եկեղեցու սեղանի կողմի պատի մէջ կարելի է նկատել մի մի նեղ մուտք, որից ներս սողալով և ոտերդ առանձնակի տեղերում ամրացնելով կարելի է իջնել դէպի վայր, մինչև եկեղեցու հիմքը: Սաքա ի հնումն եղել են պահարաններ, իսկ այժմ Խաչիկու չարաճճի երեխանց խաղալու տեղեր:

Վանքական այդ բոլոր շինութիւնները կազմուած են չորս տեսակ քարից: Բոլոր պատերը հիւսուած են մանրախիճ մածուած քարից (կոնգլոմերատ) որ շատ դժուար տաշելի է, ուստի այդ պատերը բոլորովին կոպտատաշ են: Եայի՛ջի երկու կողմի ժայռերը, Ակոռի գլխի լեռուը և Խաչիկու շրջակայքը կազմուած են այդ տեսակ քարից: Ուստի վանքի այդ նիւթը բերուած է մօտից, Երկրորդ տեսակն է հանքային ջրի գեղին և մոխրագոյն իջուածք՝ ծակտիկներով, թեթեւ և դիւրալղկելի: Վասնորոյ որմնափակ սիւները, սեղանը, առաստաղի կամարները, զանգակատան կամարները և սիւները, գուցէ և եկեղեցու գմբեթը, շինած են այդ տեսակից: Սա բերուած է Արնէտի աւերակների մօտից, Սղնախ կոչուած ձորից, ուր կայ այդպիսինիւթ: Երրորդ տեսակն աւագախառն գեղնագոյն մեծ քարեր են, բերած նոյն Սղնախի ձորից: Իսկ չորրորդը գեղեցիկ գեղին նուրբ քար է պատերի վերին եզրների վերայ (կարնիզ), որոնց վերայ միաշար ձգուած է Սմբատ իշխանի արձանագրութիւնը: Այս նիւթը բերուած է Առփայ գիւղի մօտից, որ հեռաւորութեան և վատ ճանապարհի պատճառով կարող էր համարուիլ մեծ տանջանք:

Քացի աւագ բեմը՝ միւս չորս խորաններն ևս իւրեանց բեմերով յարմարեցրած են ժամաստցութեան: Եկեղեցու ներսը չէ երևում ոչ նկար և ոչ արձանագրութիւն: Իսկ արտաքին կողմից՝ չորս լուսամուտներից իւրաքանչիւրը իւր վերևի մասում ունի աղեղի նման երկու ծայրով իջնող ծալկահսիւս ժապաւէն, որոնց իւրաքանչիւր ծայրում կան հարաւային և հիւ-

սխալին լուսամուտների վերայ մի մի առիւծներ, իսկ արեւելեան և արեւմտեանի վերայ մի մի աղաւնի: Արտաքին կողմում կան երկու արձանագրութիւն, մինը կարճ, սեղանի պատի վերի շուրջը, միւսը երկայն, հարաւային պատի վերայ, երկուսիցն ևս քարեր ընկնելով և կորչելով խախտուել են նոքա, մասամբ մաշուել են անձրեւից և քամուց:

Առաջին արձանագրութեան մէջ Սմբատ իշխանը յայտնումէ, որ նա նորոգել է Քարկոփայ վանքը և դորա համար խնդրումէ ուրիշներէց յիշել աղօթքի մէջ նոյն Սմբատին, նորա եղբայր Տարսայի՝ Ռին, մօրը — Ասփային և կնոջը Ռուզուբանին (և ոչ թէ Ուքան, Ջալալ.) Եկեղեցու վերին անկիւններում փակագիր ձևով փորագրած է «Սմբատ արքայ»:

Հարաւային պատի երկար և ձիգ արձանագրութիւնը թէպէտ արձանագրած է Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանի պատմութեան ԻԴ. գլխումը և Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանի ճանապարհորդութեան երկրորդ հատորի 168—169 երեսներում, սակայն ինքն ևս, առանց մտքի խանգարման, փոքր ինչ տարբերում են իրարից, մինչև անգամ Ջալալեանի գիրքը իւր արձանագրութեան պատճէնը վերցրել է ոչ թէ Քարկոփի պատից, այլ Օրբելեանի պատմութիւնից, այն ևս սխալներ թող տալով, ուստի այստեղ դնում եմ արձանագրութեան իսկական պատճէնը, ջնջուած, մաշուած և կորած տեղերը լրացնելով կամ կէտերով և կամ ուր հնարաւոր է, Օրբելեանի բերած պատճէնի բառերով, փակելով սորանց գծերի մէջ:

«Նախ իսկ և առաջին (լեալ էր վանքն խոտակերաց, և) վասն զի աւերեալ էր կրօնաւորանոց ուխտս և Քաւարանք որ ի սմա ի վաղնջուց հետէ, այս ինքն վանքս Խոտակերաց. իսկ ապա տէրն իմ երանելին Աշոտ Սիւնեաց... աշխտութեամբ շինեալ զտուրբ զեկեղեցիսն միանգամայն իսկ նորոգապէս զարդարեալ զամենայն շինուածս կրօնաւորական դասիւք: Իսկ և իսկ եղև տեառն իմոյ Աշոտոյ ելանել ի մարմնոյ աստի (փոխելով) առ հարս իւր (սահմա)նցին որդեակք մեր զգիւղս Արաստամուղ ի սուրբ ուխտս սահմանովք, զոր իւրեանց

Հարքն կերեալ են, վասն երանելի իշխանին և իմ՝ Նուշանայ Սիւնեաց (աիկնոջ, հագեաց արձան և) յիշատակ (մեզ և յ)արեւշատութեան (որդեկաց մերոց)։

« Եւ եղև զի հիմնաշարք (լինելով աւերեցան) եկեղեցիքն տեառն իմոյ Աշոտի և (իմ) տեառն իմոյ Աշոտի կենաց հազորք կամելով նորոգել զյիշատակ.....ան տեառն իմոյ փռու... շինուածս յանուն սրբոյ և միշտ կուսի Մարիամու (և վասն փրկութեան) տեառն իմոյ Աշոտի Աիւնեաց իշխանի և իմոյ մեղուցեալ հոգոցս (և որդւոց մերոց կենաց և յաջողման իբրև զնոյն) գիւղն զԱրատամուղ ամենայն սահմանօք (նորա զոր կերեալ էին մին) և ցայ (սոր ժամանակի ի ձեռս վասնացս առաջ) նորդիս հաստատեցի անխախտւտ պայմանով ի նուրբ Աստուածածինս (ի վասն Խոտակերաց մինչև յաւիտեան ժամանակաց) կամակցութեամբ որդեկաց իմոց և զայս պայման (հաստատեցի ի սուրբ) կրօնաւորանոցի աստ, զի ի հինգ եկեղեցիսդ այդ, զոր ես շին (եցի, մին) եկեղեցիդ, որ է (Աստուածածինդ՝ տեառ) ն իմոյ Աշոտի և յիմ՝ անուն լիցի (ի տարին երեք) քառասունք (կատարեն մե)րոց մեղուցեալ հագեացս թերևս գոցուք ողորմութիւն յահող ատենին Քրիստոսի, (այլ ևս) չորս եկեղեցիքդ եղիցին որդեկաց իմոց յարեւշատութիւն և ի հոգեա(ցս փր)կութիւն և ի հոգա..... քառասունս ։

« Եւ արք մի ոք իշխեսցէ այսմ՝ տնօրւտ վճռիս (և պայմանիս ընդիմակացութիւն և խափանումն առնել, ապա եթէ ոչ՝ այնպիսին ընդ Յուդայի (մատնչին մասնակից) լիցի և մեղաց մերոց համար տացէ աւուր ահեղ ատենին Քրիստոսի։ Եւ մեք Տէր Յոհաննէս հա)յոց կաթողիկոս վկայ եմք այսմ գրոց և վճռի, և որք այսմ վճռի.....անխափան...մն.....ունեց, այնպիսին նզովս չարաչար ընկալցի ի սրբոյ Առասուրջէն Քրիզորէ...ամենայն սրբոց հայրապետաց..... գրեցաւ յիշատակարան կտակիս..... յ ։

Արձանագրութեան թուականը թէև ջնջուած է, բայց Օրբելեանի բերած պատճէնից երևում է, որ նա կազմուած է հայոց 359 կամ Փրկչական 910 թուականին։ Նոյնպէս հարկաւոր է ուշադրութեան առնել, որ Օրբելեանի պատճէնի

մէջ գիւղի անունը գրուած է Արաստամոս-ի, իսկ վերը բերած Քարկոփայ արձանագրութեան մէջ — Արաստամոս-ի: Հաւանական է որ վերջինս ճիշդ լինի, ըստ սրում նոյն Օրբելեանը իւր պատմութեան այլ տեղերում վերջին անունն է ապիս:

Ահա այն ցոյր տեսանելի բաները, ինչ որ կարելի է նկատել այժմեան Քարկոփի թշուառ մնացորդի վերայ, Ասիայն այսպէս չէ եղել այդ վանքն ի հնումն: Նա ունեցել է փառաւոր անցեալ. և եթէ ոչինչ պատմական տեղեկութիւն անգամ չունենայինք նորա մասին, ըսոյց և այնպէս նորա շրջապատ բազմաթիւ սենեակների, դամբարանի, խաչքարերի, քրտադալի, ձիթաճանրի և գիւղատեղի աւերակները մատնացոյց կ'լինէին նորա անցեալ փառաւոր կեանքին: Սակայն մենք ունինք այժմ և արձանագրութիւններ և տեղեկութիւններ պատմութիւնից:

Դիմելով Օրբելեանի պատմութեանը *), մենք իմանում ենք, որ այժմեան Քարկոփայ վանքի տեղը 910 թուականից շատ տարիներ առաջ կանգնած է եղել Խոփակէրայ վանքը, ուր բնակեցրած էր Խոփակէրայ անուանեալ խաչը, որ՝ ըստ Օրբելեանի՝ ահարկու և աստուածահարաչ էր: Թէպէտ խոտակերները ունէին իւրեանց բուն տունը և եկեղեցին, ինչպէս տեսնք, այժմեան Քարկոփի տեղը, Արաստամոսի գիւղի մօտ, բայց իւրեանք բազմաթիւ լինելով բնակում էին Ասոյց ձորի ստորտում, Հրատեկայ բերդի սահմանում, Արաստամոսի գիւղի մօտ: Նոքա կազմում էին մեծ բազմութիւն և վարում էին զրկողական կեանք. հեռացած էին հանգերձից և մարմնաւոր կերակուրներից: Նոքա հագնում էին կոշտ և կոպիտ հանգերձ:

Բնակուելով քարաժայռերի և խոր ձորերի մէջ՝ նոքա պարպում էին մշտնջենաւոր աղօթքներով և միայն կիւրակի օրերը միւսեանց մօտ ժողովուելով հաղորդուում էին երկնաւոր զինմանը. և այդպիսով գինու և հացի համը ճաշակում էին միայն հաղորդութեան միջոցով: Միւս օրերը, նոցանից ումանք բնակւում էին ժայռի ձեղքերում, ումանք նեղ խղի մէջ, ումանք բացօդեայ, լռիկ ու մնջիկ շատանում էին հնդեղէնով և

(*) Օրբել. Պատմ. նահ. Սիս. գլ. ԽԳ.

բանջարով, Ոմանք շինում էին նեղ ձորակի մէջ մատուռ քաղցրահամ աղբիւրի մօտ, որ Սրբելեանի ժամանակ Ոււռուտ էր կոչվում: Ուր կային նորանց բժշկարար և հրաշագործ գերեզմանները: Ոմանք իւրեանց բնակութեան համար շինեցին խորան միւս արձակ ձորում, որ Հին վանք էին կոչում: Ոմանք ևս ցիր և ցան, այս և այն տեղ էին բնակում: Բայց բոլոր խոտաճարակների բուռն տեղը և եկեղեցին, ինչպէս վերը յիշուեց, էին այժմեան Քարկոփի տեղը, Արաստամուխ գիւղի մօտ:

(Տարաւանիւն)

ՔԱԶԲԵՐՈՒՆԻ.

ԱԶԳԱՅԻՆ

Ամսոյս 30 կատարուեցաւ Ս. Աթոռոյս ձեմարանի փերորդ տարեգարձը հանդիսաւոր կերպով: Ս. պատարագից յետ խուռն բազմութեան ներկայութեամբ, Աթոռոյս միաբանութիւնը, ձեմարանի ուսուցիչք ու աշակերտք դուրս գալով եկեղեցուց կատարեցին հոգեհանգիստ ի Տէր հանգուցեալ Գէորգ Դ. Կաթողիկոսի գերեզմանի վերայ: Ապա գնացին ձեմարան, որոյ հանդիսարանը զարդարած էր ծաղիկներով: Հանդիսագիրն էր Մայր Աթոռոյս աւագ լուսարար Երեմիա Սրբագանը: ձեմարանիս տեսուչ Արժ. Հայր Նահապետը կարդաց 188⁸/₉ ուսումնական տարուայ հաշիւը: Իսկ ուսուցիչ պ. Ս. Լիսիցեանը կարդաց ճառ ձեմարանի նշանակութեան և այն յուսոյ մասին, որ ունի հայ եկեղեցական վարչութիւնն և հայ ազգը նորա վերայ: Երգուեցան շարական ու ազգային երգեր էլ: Գեր. Սրբազան Երեմիան վերջ դրեց հանդիսին համառօտ—ազգու ատենաբանութեամբ, որոյ իմաստն էր թէ մեծ մարդիկ անմահ են իրանց գործերով, թէ և մարմնով մեռնում են: Վերջացրեց իւր ատենաբանութիւնն հանգիստ մաղթելով հոգւոյ հանգուցեալ Գէորգ Դ. Կաթողիկոսի և երկար կեանք ներկայ Տէր Տէր Մակար Վեհափառ Հայրապետին, պաշտպանի